

ՇԱՅԵՐԸ ՇԱՎԻԼՈՒՄ

Շավիլը Փարիզից 10 կմ հեռավորության վրա գտնվող քաղաքը է 18.000 բնակչությամբ: Տեղի հայկական գաղութը շոր 80 դպրվա պարմություն ունի և շաբերին ծանոթ է որպես Լևոն Շանթի, Զապել Եսայանի և Հովսեփ Արդությանի ապրած քաղաք: Վերջինիս շիրմը գրեթե է նոյն քաղաքի գերեզմանագրանը:

Շավիլ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, հիմնված 1932 թվականին և ապա վերակառուցված 1957-ին, հանդիսանում է Շավիլ և շրջակայքի 1200 հայորդիների հոգևոր-ազգային կյանքի կենտրոն:

Շավիլ և շրջակայքի հայագիտությունը գալաքսիական և քաղաքապետարանի համարելի ջանքերով հոկտեմբերի ամիսը վերոհիշյալ քաղաքում հայքարարվեց հայկական մշակույթի ամիս: Մշակութային ծրագրի մաս էր կազմում հոկտեմբերի 1-ին Շավիլի մշակութային կենտրոնում բացված «Հայերը Ֆրանսիայում և ի մասնավորի՝ Շավիլում» խորագիրը կրող լուսանկարների ցուցահանդեսը: Ցուցադրված լուսանկարների միջոցով կարելի էր ծանոթանալ Հայաստանի համառոր պարմությանը, Ֆրանսիայի պարմության մեջ իրենց վասկակը ունեցող հայագիտությունը մարդկանց, ինչպես նաև Շավիլում հասքափառ հայկական համայնքին և նրա պարմությանը:

Մշակութային ծրագրերի շարքին էր պարկանում նաև հոկտեմբերի 5-ին Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մոգակա երապարակում համայնքի ջանքերով կառուցված հայկական հուշարձանի բացումը:

Խոշարձանի հեղինակներ՝ ճարպարապետ Մանվել Տեյիրմենճյանը և քանդակագործ Ժորժ Այվայյանը, հուշակոթողը հայ և օպարագիտ հանրությանը ներկայացրել էին երկու խորհրդանշական իմաստներով: Նախ՝ առաջին աշխարհամարտի դարիների երկու միլիոն նահապակների հիշաբակը հավերժացնող կողող, երկրորդ՝ հուշարձան, որ ներկայացնում է հայկական մշակույթը ֆրանսիական հողի վրա:

Խոշարձանի գասմներին գրանիքն սյուները խորհրդանշում են պարմական Հայաստանի նոյնարիկ նահանգները՝ Մեծ և փոքր Մասիսների գծագրմամբ: Դինգ ասդիճանները, որ մեզ դպրում են դեպի հուշարձան, ներկայացնում են հինգ աշխարհամասերը, որը ապրում է աշխարհասկիուր հայ ժողովուրդը: Եվ, վերջապես, հուշարձանի կենսքրոնում խոյացող հայկական գրերով կոթողը, որը խաչքար է հիշեցնում, հայոց անկուդրում ոգու խոսուն վկայությունն է և հավասպումը: Խաչքարի վրա երկու լեզուներով գրված է «ՕՇ, ԻՆՉ ՓՈՒԹԹ ԿՑԱՌԱԾ ՄԵՇՆՈՂ, ԵՐԲՈՐ ԵՐԱԾՆ ԱՆՄԱՆ Է» (Դ. Վարուժակ) և «ՏԵՍԱ, ՈՐ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂՇԵԼ ՊԵՏՔ ԷՐ, ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՄՈՒԵԳՆԱԲԱՐ ՎԱՓԾԱՎԿԵԼ» (Սիամանիք) բողերը:

Բացման արարողությունը գիլավորում էին Շավիլի քաղաքապետ Ժան Լըվանը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պարվիրակ և Փարիզի առաջնորդ Գյուլ արքապս. Նազգաշյանը, շրջակա քաղաքների քաղաքապետեր, երեսփոխաններ, նախկին նախարարներ և պետական պաշտոնադպրության անձինք:

Մինչ բացումն ու օրինությունը բանախոսությամբ հանդես եկավ Շավիլի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վարչական խորհրդի ափենապետ դիմար Դրայք Դրաշյանը: Ֆրանսիայասպան բարեկամության մասին խոսելիս ափենապետը շեշտեց նաև, որ «Այս հուշարձանը Շավիլի և շրջակայքի հայության կողմից նվեր է շուրջ 80 տարի առաջ իրեն պատրան դրված Շավիլի քաղաքին»:

Ֆրանսիայում Հայկական դեսպանագրան առաջին քարտուղար Ռուբեն Խարազյանն ընթերցեց դեսպան Էդուարդ Նալբանդյանի խոսքը, որը պարտականությունների բերումով այդ ժամանակ Ֆրանսիայում չէր:

Ապա հավաքված հոծ բազմությանն իր խոսքն ուղղեց Գյուլ արքեպս. Նազգաշյանը՝ վկայակոչելով Ռենանի «Ազգային սուգերը ազգային հիշափակների գրեսանկյունից ավելի արժեքավոր են, քան հայրանակները, որովհետք սուգերը ժողովուրդներին պարտականություն և միացյալ ճիզ են պարտադրում» խոսքերը:

Եղրափակիչ ելույթը վերապահված էր Շավիլի քաղաքապետ Ժան Լըվանին: Քաղաքավերն իր համար առանձնակի պարփակ համարեց նման հուշարձանի բացման ձեռնարկին մասնակցելը և քաղաքի բնակիչների անունից շնորհակալություն հայդունեց այսպիսի նվեր մաքուցելու համար: Նա նշեց, որ հիշափակի, խոկումի և հարգանքի այս հուշարձանն կոթողող պիտի նաև առաջիկա գործունեության հրավեր նկարվի:

Ելույթների ավարտին հուշարձանի բացումը կատարեցին Շավիլի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վարչության ափենապետ Ռ. Դրայքյանը և Շավիլի քաղաքապետ Ժ. Լըվանը: Հուշարձանի բացմանը հաջորդեց օրինությունը՝ ձեռամբ Գյուլ արքեպս. Նազգաշյանի:

**ՀԱՅ ՖՐԱՆՍԻԱԿԱՅ ՇԱՄԱՅՆՔԻՑ
ՍՏԱՑՎԱԾ ՇԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ**